# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 11-ի N 25-Ն հրամանը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության Մարալիկի տարածքային կենտրոնըսոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով ձևավորում է համակարգող խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ)։ Տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) կողմերն են Համաձայնագրին միացած սուբյեկտները՝ տարածքային կենտրոնը, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպությունները, ինչպես նաև ֆիզիկական անձինք (միասին նաև՝ Կողմեր)։

Խորհրդի կազմում պարտադիր ընդգրկվում են Միասնական սոցիալական ծառայության Մարալիկի տարածքային կենտրոնի երկու՝ սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագրերի մասնագետ, մարզպետարանի կամ Երևանի քաղաքապետարանի կամ Երևանի վարչական շրջանի, ներքին գործերի նախարարության ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման տարածքային ստորաբաժանման մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ներկայացուցիչներ և ֆիզիկական անձինք՝ ոչ ավելի հինգ, ընդամենն ինն անդամ:

Խորհուրդը գործում է Խորհրդի անհատական կազմը ձևավորվելուց հետո 2 տարի ժամկետով:

Խորհրդին անդամագրվելու հայտագրման համար ներկայացվող նվազագույն պահանջներն են.

- սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձ,
- սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի իրականացում:

Կողմերն իրենց առաջարկությունները Խորհրդին անդամության համար կարող են ներկայացնել մինչև 2023 թվականի հունիսի20-ըՄիասնական սոցիալական ծառայության Մարալիկի տարածքային կենտրոն (հասցե՝Շիրակի մարզ,ք.Մարալիկ,Մադաթյան1)։
Գործընթացի մասին առավել մանրամասն տեղեկատվություն ներառված է Համաձայնագրում, որը տրամադրվում է Կողմերին։

**ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության Մարալիկի տարածքային կենտրոն**